




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԷՍ


ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական
և Մանկավարժական



1902 ՓԵՏՐՈՒԱՐ 20 — ԹԻԻ 13

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ՀԱՆԳԻՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراكيداق —
مجموعه علوم

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 13

20 ՓԵՏՐՈՒԱՐ 1902



Հայր Բարաբբաս , գտալի գլուխը Բաշաճ , դրանք սեմին վրայ մեկի մեկի կը Բնանար

ՀԱՅՐ ԲԱՐԱՐԱՐԱՍԻ ՎՐԵԺԸ

Ասկէ քսան տարի առաջ մեր գիւղի մեծ փողոցին անկիւնը նպարավաճառ մը կար Բարաբբաս անունով։ Այս անունը շատ սիրուն չէր, բայց ի՞նչ կրնար ընել խեղճ նրպարավաճառը, իր հայրը, մեծ հայրը, պապուն հայրը, ամէնքն ալ այդ մականունը կրած էին, եւ ամէնքն ալ նպարավաճառ եղած էին իրեն պէս։

Մենք, պզտիկ ստահակներս, բնաւ կարեւորութիւն չէինք տար հայր Բարաբբասի ընտանիքին այս հնութեան, հապա ամէն օր մէյմէկ նոր սատանութիւններ կը խորհէինք թշուառ նպարավաճառը կատղեցնելու։ Չպիտի ըսեմ թէ ինչե՛ր ըրինք խեղճ մարդուն գլխուն. որովհետեւ, նախ քրածներնիս խենդ բաներ էին, երկրորդ, կրնայ ըլլալ որ դուք ալ փորձելու ելլէք և ձեր ծնողքը ու զեղին նպարավաճառը ինձի գէշ ըսեն։ Մինակ պիտի պատմեմ թէ, ի՛նչ միջոցաւ հայր Բարաբբաս կրցաւ մեր ձեռքէն ազատիլ։

Քանի մը օրէ ի վեր խանութին դուրսը կանաչ ներկուած խոշոր տակառ մը դրուած էր, բերանը բաց, վրան խոշոր գլորերով ՄԵՂՐ գրուած։ Ի՛նչ փորձութիւն մեզի պէս շատակերներու, որոնք մտովի հաշիւ կ'ընէին թէ հայր Բարաբբասի տակառին մէջ քանի՞ շերտ հացի վրայ քսուելիք մեղր կայ։

Առաջները հեռուէն նայելով բաւականացանք, բայց կամաց կամաց համարձակութիւն առինք և սկսանք տակառին մօտիկնալ մինչեւ իսկ մատերնիս մէջը խոթել։ Ընկերներէս ամէնէն համարձակը ձեռքի չոր հացը մեղրին մէջ թաթխեց ու փախաւ. ա՛լ սառը կտորած էր. քանի՞ խանութին առջեւէն անցնէինք, տակառին չհանդպած չէինք երթար։ Երբեմն նպարավաճառին բարկութենէն կարմրեցած դէմքը կ'երեւէր դրան սեմին վրայ, մինչդեռ մենք ճնճղուկներու պէս փախչելով՝ երբ ինքզինքնիս ապահով կ'ըզդայինք, ետ կը դառնայինք և հաղարու մէկ շարժումներով կը պօռայինք։

— Պարո՛ն, հացս ինքնիրեն մէջը թաթխուեցաւ, եթէ չես հաւատար նորէն փորձեմ։

Եւ նպարավաճառին կատաղութեան մէկ շարժումին, աշխարհի բոլոր ստահակներուն

ծանօթ միտոս շարժումովը կը պատասխանէինք։

Եւ հասաւ օր մը, քառութեան օրը, երբ երեք ընկերներով խանութին առջեւէն կ'անցնէի, հայր Բարաբբաս գտակը գլուխը քաշած, դրան սեմին վրայ մօիկ մօիկ կը քնանար։ Կէսօրուան ճաշը ընելէ ետքը դպրոց կը դառնայինք. մեղրին համը նախելու ճիշդ ատենն էր. երեքնիս ալ ոտքերնուս ծայրին վրայ կոխելով տակառին քովը դացինք, հացերնիս մէջը թաթխեցինք և հեռանալու վրայ էինք, երբ յանկարծ հայր Բարաբբաս ոտքի ցատքեց, գլուխը վեր առաւ ու վրանիս վազեց. ընկերներէս մին ու ես արդէն բաւական հեռուն էինք, Մինակ Երամ, չկրնալով շուտով պրծիլ, օձիքը ձեռք տուաւ։

— Թշուառական քեզ, ոռնաց նպարավաճառը, մեղրը կը սիրեն, հա՛, կեցիր, քեզի սորվեցնեմ։



Ու խեղճ տղուն օձիքէն ու բանդալոնին յատակէն բռնելով գլուխը մեղրին մէջը խոթեց։

Այս պահուն, Արամի գլխուն պէս ծիծաղելի բան տեսած չունէի. մաղերը իրար փակեր էին, մեղրը քիթէն ու ականջներէն վար վազելով մինչեւ կոնակը կ'երթար։

— Թո՛ղ տուր ինձի, հայր Բարաբբաս, մէյմըն ալ չեմ ըներ, կը ճչէր խեղճը։

Բարաբբաս անխղճազար, տուած պատիժը կատարեալ ընել ուզեց։ Արամի ականջէն բռնեց և մինչեւ դպրոց բերաւ։

Տղաքներուն հանած աղմուկը կրնաք երեւակայել. դատտիարակը հրամայեց տնտեսին որ խեղճին գլուխը մաքրէ ամէնուն ներկայութեանը :

Կրնաք վստահ ըլլալ, սիրելի բարեկամներս. թէ, ալ այնուհետեւ մենէ մէկը չհամարձակեցաւ հայր Բարաբրասի խանութին առջեւէն անցնիլ. սարսափելի նպարավաճառին մինակ անունը սրտերնիս թունդ կը հանէր :

ԱՌԵՍԻՆԸ

Ո՛հ, քանի՜ քաղցր ու սիրելի է պահն այն, ուր վերջապիտի առկայծեալ ու նուազկոտ ճառագայթները՝ տուրնջեան վերջին ժպիտներուն նման կամ գարնան վերջին վարդերուն պէս կը թառամին արեւմտեան ոստերուն ետեւ :

Պա՛հ, ուր նսեմաստուեր անտառաց թիկունքէն երկնածեմ թագուհւոյ՝ մը պէս շքեղաշուք կը բարձրանայ լուսինն արծաթճակատ ու կը սփռէ իր արծաթճաճանչները ծովանին վրայ :

Երկնային վեհափառ փարոս մը կը ջահակտի, մատնանիչ ցոյց տալով ուղիւն թէ նաւագին՝ որ ծովերուն անդնդոց վրայ կը ճանապարհորդէ ուղեկորոյս, և թէ որսորդին՝ որ անտառաց խորը անառաջնորդ ու քայլամուրը կը թափառի :

Քանի՛ սրտառուչ է պահն այն դիչերային, երբ լուսթեան ու մթութեան մէջ թաղուած այրիին իր կորուսած սիրականին յիշատակովն աղէկտուր ու յուսակտուր կ'արտատուէ լռիկ մնջիկ, եւ լուսնեկին նշոյլներուն եւ եթ կ'աւանդէ իր ծանրաթախիծ ու ծանրակիծ հոգւոյն վշտերն անհուն ու անձուկներն մարմրուն :

Ո՛հ, փայլէ՛, լուսնակդ իմ գեղեցիկ, փայլէ՛ իմ գիչերային խոնջ ու վաստակաբեկ տքնութեանցս մէջ՝ կարօտահիւժ հոգւոյս ու լքեալ սրտիս համար քու դողդոջուն ու պաղպաջուն նշոյլներդ՝ նորափետուր թեւեր են որուն ես բարձրաթռիչ կը սաւառնիմ, եւ լուսագունտէ լուսագունտ կը հասնիմ այն լուսաղբիւր Աստուած-ակունքին, ոյր ովկէանէն կաթած մի չիթն ես լոկ :

Ո՛հ, խորհրդաւոր չու մեղամաղճոտ պահուն արդեօք քանիններուն դժբաղդ արցունքներուն, քանիններուն հրճուանաց մէջ կը ցոլան երկնաշիթ արցունքներդ ու երկնաժպիտ շողերդ : Կը սիրէ հոգիս ճառագայթներուդ հետ պլլուած յածիլ ու փայլիլ պուրակէ պուրակ, ուր անտառին երաժիշտը իր սիրալեզու ու աղու դայլայլիկներովը կ'զմայլեցնէ ու կը թնդացնէ երկինքն ու երկիրը համրօրէն :

Ո՛հ, կը սիրեմ նշոյլներուդ հետ ման դալ եղեմէ եդեմ, ուր երանութիւնը ծաղկանց խունկերու հետ, պերճախօսութեանց հետ, երկնաչու՝ մաղթանք ու աղօթք կը թռչի :

Ժո՛ւռ դալ ճառագայթներուդ հետ ծովէ ծով և անոնց արծաթ-ալեակներուն մէջ արծաթ-վարդերուդ հետ քմահաճոյք ծփալ ու նազանք ծածանիլ : Այցելել՝ ճաճանչներուդ հետ վայրերն այն սիրական ու նուիրական, որոնք դեռ կը հեւան մեր այնքան սիրական հոգիներուն թաղուած յիշատակներովը ու սրբատուփ նշխարներովը վայրեր բացօդեայ՝ մատուռներուն չափ նուիրական, որոնց վրայ կը բարձրանայ սգատերեւ ու մահաստուեր նոճին կամ ուռենին վարսագեղ ու լաւահառաչ մշտամրմունջ ու բազկատարած քահանայապետի մը նման, և որոյ միջին ստուերներուն մէջ ճառագայթներդ կանթեղ վառած՝ քաղցր ու սիրելի է ինձ յաւէտ համբուրել ու հոտոտել ծնրաղիր ու երկըրպագել ջերմեանդութեամբ :

Մէտէօրա չքնաղագե՛ղ, քանի՛ դարերու աչքով կը նայիս դու այժմ ինձ և դեռ քանի՛ յաւիտենականներուն աչքով պիտի նայիս ինձ նման լուսաշիթ համբոյրներովն արբենալ ու զմայլիլ սիրող ոգիներու : Մէն մի նշոյլներդ որ կը փալփիլին ծաղկանց վրայ, թէ ալեակներուն մէջ անհուն բանաստեղծութիւններէն, զորս ամէն գիչեր ընուութեան տիեզերաջահ մատենին մէջ կը հեղինակես :

Ճառագայթներդ կը հեղուս առուակին ու աղբերակին արծաթ ալեկաց մէջ՝ անոնց դեղջիններուն ու կարկաշիւններուն հետ խառնուելով. միանդամայն ընութեան բիւրատոր համբուրիս հետ կը կաղմեն տիեզերական տաղերգութիւնը, զոր հոգմբն իրենց սոյլերով, թռչուններն իրենց ճըլուր-

լուսնեքով, ծաղկունք իրենց բուրուհներով
և երազուն հոգիներն իրենց հառաչներով
կ'ընծայեն առ մեծն էն, որուն ձեռքը ամէն
կամարիդ վրայ զքեզ տիեզերաջահ լապտեր
կը վառէ ու կը կախէ :

ՅՈՎՀԱՆՆԷՅ ՊՕՂՈՍԵԱՆ

Ուսանող Պէգճեան Մայր-Վարժարանի

ԸՆԿՈՅՁԻ ԿԱՐԿՈՒՏԸ

Երբ ես քեզ նման դեռ էի փոքրիկ,
Միկ ըրէ դուն, սիրելի Մաքրիկ,
Օր մը միտս դրի ալ դպրոց չերթալ,
Ինքնիրենս ըսի. — « Ի՞նչ պէտք է կարդալ,
Քանի որ հայրիկս հարուստ է հարուստ,
Ունի տուն, դրամ, կերակուր ապրուստ : »
Բայց ինչ բան պատճառ բռնելու հարկ կար,
Շատ մտածեցի, ա՛խ, ես ապրկար .
— « Հա՛ միտքս ինչպէս, սուտ հիւանդ կ'ըլլամ,
Գլուխս կը ցաւի, կ'ըսեն ու կուլամ :
Մայրիկքս հարկաւ ինձի կը գրայ,
Դպրոց չի դրկեր, օ՛խ նամբան գայ,
Եւ երբ այսպիսի ձիւն ձմեռ ասեն՝
Խեղճերը միայն հանգիստը կ'աւրեն,
Ու կ'ելլեն կ'երթան առտուն կանուխկէկ
Հոն տեղ սառելու տեսեան հետ հետ .
Գոնէ սորվածնիս բան մըն ալ ըլլայ .
Հոլովէ նայիմ ուղղական բաղլայ . . . » — :
Այս խորհուրդներով լաւ մը տգորուսած՝
Կ'երթամ մօրս կ'ըսեմ. — « մայրի՛կ դուռը բաց,
Ժամանակ չունիմ, հիւանդ եմ հիւանդ . . . »
Բայց դժբախտաբար մօտեմար կաղանդ,
Խնձորէն, քանձէն պէ՛տք էր զուրկ մնալ .
Չէ՛, չէ՛, այս չեղաւ : Ուրիշ դուռ բանալ
Պնտք էր անհրաժեշտ, որպէս զի չերթամ .
Այլ եւս դպրոց ու գիրք չկարդամ,
Ինքնիրենս վստահ դարձայ դէպ ի տուն,
Երբ շիտակ դպրոց կ'երթայի առտուն,
Իբրեւ ուժասպառ տեսնեմ ներս մտայ,
Բաղձացած հանգիստս հոն՝ իսկոյն գայ,
Բժիշկ, բժիշկը, տունն իրար անցած,
— « Հիւանդ կայ, հիւանդ, կ'ըսեն կամաց » .
Բայց շատ չտեսեց այս խաբէութիւն
Բոլոր ծրագիրս հանեց ապարդիւն :
Սենեկին մէջ կար մէկ մեծ պահարան
Որ էր խիստ բարձր եւ ունէր դարան,

Հոն՝ բարձր դրուած էր մի մեծ սական
Որուն մէջ անուշտ խնձոր, քանձ, նուշ կար :
Այնքա գոցեցի իբր քէ՛ ննջէի,
Սական միտս տղայ փորձառու չէի,
Բոլոր տունիներն փոխ հեռացան,
Կամացուկ մ'ոտքի ելայ մեղմ անձայն .
Սեղան մը դրի, վրան մի արքոն,
Վրան ալ բարձր ու հասայ ասոր .
Ինձի քաշեցի սականըն շուտ, շուտ,
Բայց դժբաղդաբար ընկոյզի կարկուտ՝
Մը սկսաւ որ ես ալ վար ինչպէս,
Ասկէց աւելի խնդալու բան կա՞յ . . . :

Թ. Կ. ՆԻՈՂՈՍԵԱՆ

ՓՈՔՐԹԿ ԳՐՏՆԱԿԱՆԸ

ՏՐԱՄԱՐՈՍԱՌԻԹԻՆ

(ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ)

ՏԵՍԻԼ .Ա.

(Հերմինէ իր զրքերով եւ քնագիտական մէկ քանի
գործիներով շրջապատուած, նստած է մտազբաղ
սեղանին առջեւ, աչքերը զրքին վրայ սեւեռած՝ կը
շանայ ու կ'աշխատի նոր գիտերու հետամուտ ըլլալ .

ՀԵՐՄԻՆԷ, ՍԻՐԱՆՈՅՇ ԵՒ ԵՐԱՆՈՒՀԻ

Սիրանոյշ եւ Երանուհի. — Օհօ՛, հօ՛,
բարի լոյս, օր. Հերմինէ :

Հերմինէ. — Օհօ՛, ազնիւ օրիորդներ,
ի՞նչպէս էք նայինք, հրամանեցէք նստեցէք :

Երանուհի. — Ան չէ ամմա, օր. Հերմինէ,
այսօր ալ պիտի կրնամ մեզի քիչ մը
զուարճացնել : սրտերնիս շատ նեղուեցաւ նէ
եկուր քիչ մը օր. Հերմինէին երթանք ըսի
մեր օր. Սիրանոյշին :

Հերմինէ. — Շատ աղէկ ըրիք, հրամանեցէք :
(Արքոն կը ներկայացնէ) :

Սիրանոյշ. — Իրաւ որ օրիորդ, հոգի
կուտամ ձեր գիտերուն, ձեր զուարճալի
խաղերուն եւ մանաւանդ շատ կ'ախորժիմ
ձեր սրախօսութիւններէն :

Հերմինէ. — Այդ ձեր ազնուութիւնն է,
չարաչար ազնիւ էք, օրիորդ :

Երանիկ. — Առի՞ր մի բայդդ, օր. Սիրանոյշ. կատակը մեկդի, Հէրմինէ, հայտէ բան մը ըրէ տէ քիչ մը զուարճանանք, ըսէ՛, խօսէ, հարկաւ նոր բան մը սորված ես:

Հերմինէ. Գրքերու մէջ սորվելու նոր նոր բաներ անպակաս են, բաւական է որ մարդս հետաքրքիր եւ անդամ մը ձեռքը առնէ գտնելու համար:

Երանիկ. — Ան չէ ամմա՛:

Սիրանոյշ. — Սա գիտուններդ առանց զգուեցնելու ուսում սորվեցնելու դիւրին միջոցը կրցա՞ն գտնել, ամառուան սա՛ տաքերուն, ձմեռը ցիտին դէմ դեղագիր մը կրցա՞ն պատրաստել, Օրացոյցը կրցա՞ն փոխել, և սա արձակուրդի օրերը գոնէ 48ական ժամ պիտի կրնա՞ն ընել:

Հերմինէ. — Այդչափ ստիպող ըլլալու չէք սակայն, աղնիւ օրիորդ, յատկապէս քեզի գոհունակութիւն պատճառող բաներ գտնուած չեն թէ եւ, բայց ինչպէս գիտէք...

Երանիկ. — Բան մը գիտէ նէ խենթ ըլլամ:

Հերմինէ. — Շոգիի, ելեկտրականութեան և ուրիշ ասոնց նման հազարաւոր օգտակար դիտեր ըրած են, պակաս մը եթէ կայ, ծուլութեան եւ կարճժողութեան դէմ դեղագիր մը չի գտնուած ըլլալն է:

Սիրանոյշ. — Այդ վերջին քարը դարձեալ մեզի՞ է, օրիորդ,

Հերմինէ. — Եթէ հասնի կարելի է:

Երանիկ. — Է՛յ, մի՛ բարկանաք օրիորդ, եթէ գիտնայինք որ մեր այցելութեամբը զքեզ պիտի նեղացնենք, բնաւ չէինք գար:

Հերմինէ. — Քա՛ւ. լիցի, ես չեմ նեղանար, միայն թէ աւելի կը սիրեմ զանոնք, որք իրենց ժամանակը պարապ չեն անցըներ, այլ միշտ աշխատութեամբ կը պարապին, որովհետեւ տարիները մեզի չեն սպասեր ու մենք երբոր մեր փոքր հասակէն չի վարժեցնենք ինքզինքնիս աշխատութեան, մեր ապագան սպաննած կ'ըլլանք:

Սիրանոյշ. — Բան մը հասկնաս նէ ետքը ինծի խնայուր, Երանիկ: Հիմա գիտնական օրիորդս, մենք այդ լեզուներէն շատ չենք հասկնար, ապագայ մ'ապագայ չիյտենք, մենք ներկան նայինք, մեզի քիչ մը պիտի զուարճացնե՞ս, ան նայինք, դուն այս օրուանը կեր տէ, վաղուանը մի մտածեր, ինչուդ պէ՛տք:

Երանիկ. — Է՛յ ճանրժամանակը կ'անցնի կոր, չէ նէ երթանք:

Հերմինէ. — Կը ցաւիմ որ դուք տակաւին այդ գաղափարին կը ծառայէք. ինչ եւ է, այս օրերս գրքէ մը մէկ քանի փորձեր սորված եմ, ցոյց տամ ձեզի, քանի որ դու ւարձութիւն կ'ուզէք:

Երանիկ. — Հա՛ սանկ ըսէ, քիչ մըն ալ խնդացնող բաներու վրայ խօսինք, չէ նէ այս օրը իրիկուն ըլլալիք չունի:

Սիրանոյշ. — Եւ այն ատեն քեզի դիտուն ըսողներուն իրաւունք պիտի տամ: Տեսնենք, առաջին փորձդ ի՞նչ պիտի ընես:

Հերմինէ. — Սակայն պայմանաւ որ ինծի քիչ մը պիտի օգնէք:

Սիրանոյշ. — Հապա՛, հապա՛, ձեռքերնուս գայ նէ, հոգին անդամ կ'առնենք:

Հերմինէ. — Հիմա առաջին անգամ առ սա շիշը եւ լաւ մը նայէ, մէջը բան մը կա՞յ:

Տ Ե Ս Ի Լ Բ .

ՎԱՐՍԵՆԻԿ ԵՒ ԱՆԺՆԻ (նես կը մտնեն):
Հա՛, հա՛, հոս են եղեր:

Անժնի. — Է՛յ պաւ՛մօ, ժամ մըն է ձեզ կը փնտռենք կոր, ի՞նչ կ'ընէք այդ տեղ:

Սիրա. — (մեկուսի). Ամա՛ն, ասոնք ալ ուրիշ եկան. մենք անձախ գործերնիս յարմարցուցեր էինք:

Երան. — Է՛յ, է՛յ, սո՛ւս եղիք տէ դուք ալ նայեցէք:

Վարս. — Քոյր իմ, մենք ձեզի արդելք մը չենք կարծեմ, շարունակեցէք, մենք ալ կ'զբօսնուենք:

Սիրա. — Է՛յ, հիմա ի՞նչ պիտի ընեմ, շիշը ձեռքս մնաց, մէջը բան չիկա՛յ, պարապ է:

Անժնի. — Ծիշդ երանուհիին գլխուն պէս:

Հերմինէ. Ի՞նչ, ինչպէ՞ս պարապ, անոր մէջը բան կայ, սիրելիս:

Վարս. — Մէյ մը ձեռքս տուր սա շիշը, ես նայիմ հիմա կ'ըսեմ անոր մէջի եղածը, մէջը բան մը չերեւար կոր ամմա, կարելի է որ օդ կայ, որովհետեւ օդը չերեւար:

Հերմինէ. — Հա՛, աղէկ գիտցար. Հիմա առ սա հաւկիթը եւ առանց կտրելու դիւրութեամբ շիշին մէջ մտցուր:

Սիրա. — Ի՞նչ կ'ըսես Հերմինէ, շիշին բերանը պղտիկ, հաւկիթը մեծ, աս ասոր բերնէն կը մտնա՞յ:

Երանիկ. — Ինչո՞ւ չէ, հիւսման ըրէ ինծի կաղինին կեղեւին մէջը կը մտնամ:

Հերմիցե. — Կատակի՞ ելար, Երանի՛կ, հիմա կը տեսնես, վառէ սա բամպակը ու շիշին մէջ նետէ, հետեւապէս դիր հաւկիթն ալ շիշին բերանը, հո՞ր, տեսա՞ր:

Սիրա. է կեցցէ՛ս, Հերմիցե, բայց ի՞նչպէս ըրիր խնդրեմ, ըսէ:

Անժեկ. — Տեսա՞ր, հիմա, Սիրանոյշ, անկարելի է ըսիր. հիմա համոզուեցա՞ր թէ անկարելիները ասեղ դերձանով կը կարուի:

Երան, — Շիտակը այս խաղը շատ հետաքրքրութիւնս շարժեց, միայն չի կրցայ ըմբռնել թէ, ի՞նչպէս կ'ըլլայ որ հաւկիթը


ժամադրութեան ժամը հասաւ: Գոնէ փորձի մըն ալ կենանք:

Մնացեալը հետեւեալ քիւով

Կ. Ս. ՏԵՄԻՐԵԱՆ

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏ ՊԱՆԵԼ

Սիրելի որդեակ.



շիշին նեղ բերնէն կը մտնայ առանց կոտորելու:

Հերմ. Այդչափ չի հասկնալու բան մը չէ, բացատրութիւնը շատ դիւրին է. բամպակը վառելով շիշին մէջ չի նետեցի՞ր, անոր տաքութենէն շիշին օդը անօսրացաւ ու մէկ մասը դուրս թռաւ. քիչ մը վերջը շիշին մէջ դարձեալ ցուրտ օդ մտած ատեն հաւկիթը միասին ներս քաշեց:

Սիրա. — Շատ շնորհակալ եմք օրիորդ, Աստուած ձեր հանճարը աւելցնէ:

Երան. — Հանճարը չըլլայ նէ կարմիր բանճարը:

Անժեկ. — Աղէկ որ եկեր եմք, վարսե-նիկ, շատ գոհ մնացինք: դժբաղդարար մեր

թէ որ հաւատարիմ բարեկամ մը գտնելը շատ դժուար է, բարեկամութիւնը միշտ ամբողջ կեանքին մէջ հաստատուն պահելն ալ դիւրին բան չէ. կեանքի ընթացքին մէջ՝ նաեւ առանց մեր ուզելուն՝ այնպիսի դէպքեր կը պատահին, որոնք մէկ վայրկեանի մէջ մեր բաղմամեայ բարեկամութեան խղուելուն պատճառ կ'ըլլայ: Ասոր համար բոլոր ճիգովդ աշխատելու ես որ չըլլայ թէ քու կողմէդ այդպիսի բանի մը առիթ տաս: Շատ ճշմարիտ խօսք է այն՝ որ կ'ըսուի թէ միայն առաքինութեան վրայ հիմնուած բարեկամութիւնն հաստատուն կրնայ մնալ, ինչու որ մոլութիւններու գերի եղող մարդ մը այնպիսի առիթներու մէջ կ'իյնայ՝ որ ինքզինքը չկրնալով բռնել, բարեկամին իրմէ հեռանալուն պատճառ ու տեղի կուտայ, եւ թէպէտ ամէն մոլութիւն մեզի նոյն դժբաղդութեան մէջ կրնայ ձգել, բայց մասնաւորապէս քանի մը մոլութիւններ կան՝ որոնք թոյն են բարեկամութեան՝ ինչպէս նաեւ բոլոր ընկերական կեանքին ընդհանրապէս, եւ ասոր համար անոնցմէ խիստ մեծ զգուշութեամբ պէտք է հեռանալ: Այս մոլութիւններուն գլխաւորն է յամառութիւնը: Երկու կամ երեք հոգի որքան ալ մէկկմէկու սրտակից ու համամիտ ըլլան՝ չի կրնար ըլլալ որ երբեք այնպիսի նիւթ մը չպատահի՝ որուն մէջ տարբեր կարծիք չունենան: Արդ՝ յայտնի է որ տարբեր կարծիք ունենալն բարեկամութեան փնաս մը չի տար, բայց երբ մէկը իր կարծիքն յամառութեամբ պաշտպանէ ու ամենեւին չուզէ դիմացինին տեղի տալ, անկարելի է որ առջի սերտ բարեկամութիւնը անքակտելի մընայ: Ուստի միշտ զգոյշ ըլլալու ես կարծիքներդ կիրքով ու յամառութեամբ պաշտ-

պանելէ, եւ դիտնալ պարտաւոր ես որ տեղ-
ւոյն ու պէտքին համեմատ ուրիշներուն գի-
ջանիլ եւ տեղի տալ, բաւական է որ ըսած-
նին յայտնապէս փնտաւար կամ գէշ բան
չըլլայ: Դարձեալ՝ մարդս որքան ալ ջանք
ընէ ու ճգնի, երբեք պակասութենէ մը բո-
ւորովին ազատ չի կրնար ըլլալ, այս պատ-
ճառով, բարեկամութիւնն հաստատ պահե-
լու համար պէտք է ներել, հատուցում ը-
նելով հաշտուիլ: Ըսինք թէ՝ բարեկամդ եւ
կամ ուրիշ ո՛ր եւ չէ մէկը քեզի կերպով մը
վշտացուց, ասոր համար չըլլայ թէ ո՞ր պա-
հես, այլ պարտաւոր ես սրտովին ներել ու
հաշտուիլ, իսկ եթէ դուն վիրաւորեցիր զին-
քը, ջանա՛ որ ամէն կերպով սիրան առնես,
թողութիւն խնդրես ու հատուցում ընես:
Թէ որ այդպէս վարուելու չըլլաս, բարե-
կամութիւնը ատելութեան կը փոխուի, ու-
րով դուն եւ թէ բարեկամդ ստուգիւ դժ-
բաղդ կ'ըլլաք:



ՊԶՏԻԿ ԴԻԻՅԱԶՆԵՐ

Ի Վ Ա Ն Ք Ա

ԿԱՄ ԳԱՅԵՐՈՒ ՓՈԲՐԻԿ ՍՊԱՆԻՉԸ

Ձիւնով ճերմկցած ճամբուն ծայրը, գիւ-
ղին խեղճուկ հիւղակներէն մէկուն առջեւ
կանգ առաւ շքեղ բալխիրը: Վեհ. Ձարին
եղբայրը՝ սանձերը սպասաւորին նետելով՝
վար ցատքեց:

— Իվան Իվանովիչ, պողաց:

Մուծիկ մը՝ խրճիթէն դուրս ելաւ եւ
մինչեւ գետին խոնարհելով բարեւեց:

— Իրա՞ւ է լսածս, Իվանովիչ. հարցուց
Բարձր. իշխանը պուարթ ձայնով մը, կ'ըսեն
թէ քու պզտիկ Իվանքադ, պտըլիկ հասա-
կովը՝ խոշոր դայլ մը սպաններ է: Հաւա-
տալի բան չէ:

— Բայց իրաւ է, տէր իմ. անհատաւորի
է թէեւ, սակայն զուտ ճշմարտութիւնը այդ
է, ասկէ դատ ապացոյցները ունիմ:

Եւ հիւղակին ներսը վազելով, մէկ ձեռ-
քը դանակ մը՝ իսկ միւսը մազոտ մորթ մը
բռնած դուրս եկաւ:

— Տէ՛ր իմ, հաճեցէք անգամ մը ակնարկ
մը նետել սա գանալին վրայ. քանի մը կո-
պելի ամէն տեղ կը ծախուի. ասով է որ
տղան սպաննեց գայլը:

— Ո՞ւր է Իվանքա, հարցուց Բարձր.
Իշխանը, թո՛ղ ան պատմէ ինձի անցած
դարձածը: Հո՞ս կանչէ:

— Իվանքա՛... Իվանքա՛... Ձեր Բարձ-

րութեան հաւած ժամանակը ինքը դեռ
հոս էր, Իվանքա՛... պահուըտած ըլլալու
է թշուառականը: Պետի սորվեցնեմ իրեն
փախչիլ երթալը, երբ նորին վսեմութիւնը
կուգայ զինքը տեսնելու: Իվանքա՛... Ի-
վանքա՛... դո՛ւրս ելիր պահուըտած տեղէդ
թէ ոչ ճշմարիտ վկայ ոսկորներդ կը կոտոր-
տեմ:

Ձիւնապառ խրճիթին ետեւէն ոչխարի
մորթ մը տեսնուեցաւ որ դուրս կ'ելլէր, այս
տճեւ առաքկային մէջէն երկու փալկուն

աչքեր կ'երեւային, եւ կարմրուկ բան մըն ալ՝ որ պզտիկին սառած քիթն էր: Գայլերու սպանիչը՝ աւելի պտուղի գողի երեւոյթ մը ունէր: Իշխանը խնդալ սկսաւ:

— Ներս մտնենք, Իվան Իվանովիչ, տանդ մէջ տղան աւելի հանգիստ կը պատմէ մեզի:

Արեւը մարը մտնելու վրայ էր: Իզպան (ռուսական խրճիթ) մութը կոխեր էր: Վառարանին պաղպաղուն լոյսը միայն կը լու-


— Տասը տարու, պատասխանեց յաղթական դողդոջուն ձայն մը,

— Գայլը դո՞ւն սպաննեցիր, դո՞ւն, պզտիկ մարդուկս: Քեզի ի՞նչ ըրեր էր գայլը:

— Մեր պզտիկ Մինքան բռնէր, պիտի ուտեր եթէ . . . :

Տղուն ձայնը ալ չէր դողար. փայլակ մը անցաւ աչքերէն:

— Պատմէ նայինք մեզի, բայց ծայրէն սկսէ:



սաւորէր ներսիդին. մէկ անկիւնը կանթեղ մը կը վառեր սուրբի պատկերի մը առջեւ: Կին մը, որ բազուկներուն վրայ տղայ մը գրկած էր, ոտքի ելաւ, ծնրադրեց Նորին Բարձրութեան առջեւ, համբուրեց քղանցքին ծայրը. եւ առանց խօսք մը ըսելու գնաց իր առջի տեղը նստաւ:

Իշխանը՝ տղան ծունգերուն մէջտեղը բռնէր էր, հօր մը խնամոտ դիրքովը:

— Փանի՞ տարեկան ես, Իվանքա:

Իվանքա բաւական ատեն կօշիկներուն ծայրը նայեցաւ, բառերը միտքը չէին գար որ ըսէ: « Խօսէ՛, Իվանքա՛, ըսաւ կնկան վաղաքշոտ ձայն մը. նորէն լռութիւն. վերջապէս տղան սկսաւ, չունչը կտրելով, պզտիկ նախադասութիւններ շինելով:

— Մայրիկը բալխիւով քաղաք գացեր էր. հայրիկը վառարանին անկիւնը կը քնանար. Մինքա հանդարտ մը պառկեր էր. օրօրոցին մէջ: Միտքս ինկաւ որ կենդանի-

ներուն ուտելիք տալու ատենը եկած է։ Դուրս ելայ ձեռքս դանակ մը առած՝ չոր խոտը կտրելու համար։ Դուռը բաց ձգեցի, Մինքայի պռուռը իմանալու համար։ Կովերուն կեր տալու վրայ էի, յանկարծ դողացին, տունին կողմէն սուր աղաղակներ կը լսուէին։ Մինքայի ձայնն էր։ — Ցատքեցի, վազեցի, հասայ։ Մինքա ձիւնին վրայ դրան առջեւ պառկեր էր։ Գայլը վրան ծռեր էր։ չար աչքեր ունէր, որոնք կարմրցած ածուխներու պէս կը վառէին։ ակռաները սուր էին ու երկար։ Տեսքը անանկ սոսկալի էր որ, վախէս կեցած տեղս դամուած մնացի։ Չար կենդանին Մինքան կը տանէր։ Խեղճ Մինքա, հազար կը պռար, ա՛լ չդիմացայ, վախս անցաւ, գայլին վրայ ցատքեցի։ ականջէն, վիզէն քաշեցի մինչեւ որ բերանը բացաւ եւ Մինքան թողուց։

— Շատ աղէկ, տղա՛ս, յետո՛յ։

— Այն ատեն գայլը դարձաւ, ակռաները կճրտեց եւ վրաս յարձակեցաւ։ մէկդի քաշուիլ ուզեցի՝ առջին չի գալու համար, բայց հագուստներուս մէջ պլլուեցայ ու գետին ինկայ։ Բերնիս վրայ գայլին տաք շունչը զգացի։ եթէ ոտքի չկրնայի ելլել՝ կորսուած էի։ ձեռքովս, ոտքովս սկսայ աշխատիլ՝ կենդանին ետ մղել ու կայնելու աշխատիլ։ ձիւնը՝ բերանս, ականջս, աչքերս կը մտնէր։ Գայլը կատուեր էր։ ակռաներովը հագուստս կը պատռուէր, ճանկերովը կուրծքս կը ճանկուտէր, շունչս կտրել սկսաւ։ գազանին տակը մնացեր էի, բերանս լեցուն անոր մագերով...։ Նորէն Մինքայի ձայնը առի, եթէ չի դիմանայի՝ գայլը ինծի ուտելէն ետքը՝ Մինքան ալ պիտի լափէր։ Ամբողջ կռիւին մէջ դանակս ձեռքէս չէի թողած։ Խարխարելով չար գազանին վիզը բռնեցի եւ բոլոր ուժովս դանակը հոն խոթեցի։ Ունեցած բոլոր կորովս վերջին փորձին գործածեմ էի, զգայազիրկ գետին ինկայ։ տաք բան մը երեսս լուաց ու ալ չիմացայ թէ ինչ կ'ըլլայ։ »

Տղուն ձայնը մարեցաւ, կարծես ինքզինքը գայլին հետ կռուելու վիճակին մէջ զգալով։ Այս անգամ հայրը շարունակեց։

— Ես ալ, այս միջոցին կը քնանայի վառարանին անկիւնը։ Մինքայի ձայնէն արթնցայ ու դուրս վազեցի։ Իվանքա պառկեր մնացեր էր արիւնով ծածկուած։ քովը

գայլը իր վերջին շունչը կուտար հոգեվարքի ձգտումներով, կարծեցի թէ զաւակս մեռեր է։ գրկեցի գայն ու դէմքը ձիւնով շրփեցի, շուտով ինքզինքը գտաւ։

— Մինքա՛ն, ո՛ւր է Մինքան, հարցուց։ արդեօք վիրաւորուած է։

— Ո՛չ, ըսի, սիրելիս, Մինքան բան մը չունի, տես՝ ձայնը ինչպէս բռնեց է։

— Գայլը։

— Գայլը, դուն սպաննեցիր, պզտիկս։ Ձի կրցաւ խօսակցութիւնը շարունակելու, թեւերուս մէջ քնացաւ։

Բոլոր այս պատմութեան միջոցին, Իշխանը չէր դադարել տղան դիտելէ։ այտին պզտիկ մը զարկաւ։ — Իվանքա՛, ըսաւ, դուն քաջասիրտ տղայ մըն ես։ Սրտոտտը դաքը շատ կը սիրեմ։ եկո՛ւր ինծի հետ, իմ սպարանքիս մէջ ազնուականներու տղոց հետ պիտի մեծնաս հոն։

Իվանքա լսածին չէր հաւատար, կը կարծէր թէ Իշխանը կատակ կ'ընէ։ բայց Ն. Վսեմութեան դէմքը միշտ լուրջ էր։ Մութիկը չէր գիտեր ինչ պատասխանէ։

— Գնա՛, Իվանքա, ըսաւ կնկան ձայն մը։ գնա՛, քու մայրդ քեզմով կը հպարտանայ եւ ուրախ պիտի ըլլայ։

Այսպէս, Իվան Իվանովիչի տղան՝ գեղացիի մը զաւակը եկաւ Ռուսիոյ մայրաքաղաքին մէջ ազնուականներու տղոց հետ ապրելու եւ դաստիարակուելու։

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄԱՐԴԵՐ՝ ՈՐՈՆՔ ԶԵՆ ԱՅՐԻՐ

Այրումը՝ մարմինին տրուան ցաւերուն ամէնէն սոսկալին է։ առ հասարակ ամէն կենդանի, մարդ թէ վայրի գազան, վախ մը կ'զգայ կրակէն։ Ասոր համար է որ գարմանքնիս կը շարժի երբ կ'իմանանք կամ կը տեսնենք մարդեր, որոնք առանց վնասուելու հրաչէկ երկաթի ձողեր կամ վառած ածուխ կը բռնեն ձեռքերնուն մէջ, հալած կապար կը լեցնեն լեզուներնուն կամ փերնուն վրայ, եւլն։

ՀԱՆԱԾ ՄԵՏԱՂՆԵՐԸ

Շատ հիներն իսկ գիտէին ձեռքերնին հրաչէկ հալած մետաղի մէջ խոթել։

Զօրօտագոր, չարախօսները պապանձեցնելու համար ամբողջ մարմնոյն վրայ հալածած անաթ թափել տուաւ, առանց ամէնափոքր վնաս մը կրելու: Միջին Դարու շատ մը հեղինակներ կը պատմեն թէ տեսած են անպարարներ որոնք ձեռքերնին հալած կապարի մէջ կը թաթխեն և երեսնին կը լըլուան անով: Ս. Գրիգոր Լուսաւորչի չարչարանքներէն մին եղաւ հալած կապար ընդգնիլ ամբողջ մարմնոյն վրայ:

Մեր օրերն իսկ, չարլաթաններ՝ նման փորձեր կը կատարեն: Կապարի զտարաններու մէջ՝ այցելուները դրամ կը նետեն հալած կապարով լեցուն կաթսաներու մէջ և գործաւորները, առանց վարանելու ձեռքերնին մէջը կը խոթեն դրամը առնելու համար: Նոյն իսկ շատ գործաւորներ՝ երբ կաղապարներու մէջ հալած երկաթ կը լեցնեն, ձեռքերնին վազած հրաշէկ հեղուկին դէմ կը բռնեն:

Պրն. Պութինկի, որ սոյն խնդիրը լաւ մը ուսումնասիրած է, ինք անձամբ շատ մը փորձեր կատարած է: «Նախ մատո հալած երկաթի հոսումի մը դէմ բռնեցի, յետոյ մինչեւ երկու ժամ անդադար, զանազան փորձեր ըրի, ամբողջ ձեռքս հրաշէկ երկաթի հեղուկի մէջ խոթեցի, առանց ամէնափոքր վնասի: Մինչդեռ շատ հեռուէն իսկ չէի կրնար նայիլ այդ հալած մետաղին վրայ՝ իրարձակած սոսկալի չիւլիին պատճառաւ: Տիկին Բօուլէ, որ ինծի կ'ընկերանար, թողուց որ ութը տարեկան աղջիկը ձեռքը հալած երկաթ պարունակող կաղապարի մը մէջ խոթէ, և պզտիկը ամէնափոքր անհանգստութիւն մը իսկ չզգաց:

Համառօտակի բացատրենք թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ կենդանական կազմուածքը կըրնայ դիմանալ ամէնաբարձր բարեխառնութեան մէջ հալած մետաղներու ազդեցութեանը:

Եթէ հրաշէկ մետաղեայ թերթի մը վըրայ, կաթիլ մը ջուր դնենք, հեղուկը անմիջապէս շոգիանալով հատնելուն տեղ, ցունտ մը կը ձեւացնէ որ տաքցած մետաղին վրայ կը կենտայ առանց անոր դաչելու: Արդ, մեր ձեռքին ծակտիկներէն դուրս ելած ջուրի հատիկները՝ 'ամէնաբարձր բարեխառնութեան մը ազդեցութեան տակ գնտալներու ձեւ կ'ստանան և բոլոր ձեռքը

կը չըջապատեն: Հրաշէկ մետաղին դէմ պաշտպան ձեռնոց մը կազմելով:

ՀՐԱՇԷԿ ԵՐԿԱԹԷՆ ՉՍՅՐՈՂՆԵՐ

Հին Յոյներն ու Հռոմայեցիները շատ օրինակներ կը յիշեն ասանկ մարդերու:

Գաբատոչիոյ Բարասիա Տիանի քրմուհիները՝ հաւատարմներու եռանդը գրգռելու համար բոսիկ ոտքով հրաշէկ ածուխներու վրայ կը քալէին: Նոյնպէս Ստրաբոն կը պատմէ թէ «Փէրօնի դիցուհիին պաշտող աղախիները՝ անոնք զորս աստուածուհին կը հաճէր իր շունչովը զօրացնել, առանց վնաս մը զգալու վառ ածուխներու վրայ կը պալէին, իրեն տօնին օրերը:

Հիրբիները ամէն տարի կը նորոգէին նոյն հրաշքը, և ասով, Հռոմի Մերակոյտը շատ մը առանձնաշնորհումներ տուած էր իրենց: Բայց վարրոն պնդեց թէ այդ հրաշակատարները ստքերնուն տակ տեսակ մը օձանելի քսած են, և ոչ թէ աստուածներէն ներշնչուած:

Հին արեւելեան հէքեաթի մը դիւցազներ ջուրերը եռացող գետի մը մէջէն ու հրաշէկ պողպատի ճամբու մը վրայէն կ'անցնի, մարմինը տեսակ մը զեղով ձեփելով:

Միջին դարու մէջ կրակի դատաստանը կը ցուցնէ թէ մարդիկ եթէ ուզէին, կըրնային իրենց կամ դիմացիներուն մարմինը անկիղելի ընել, նոյն իսկ առանց անոր ըզգացնելու:

Հնդկաստանի մէջ այս տեսակ փորձերը մինչեւ իսկ աստղածններուն մէջ ալ կը կատարուէր: Սիթահ, Բամի ամուսինը (Յրդ մարդեղութիւն Վիշնուի), անարգալից կասկածները ջրելու համար բոսիկ ոտքով՝ հրաշէկ երկաթի մը վրայէն քալեց: «Սիթահի ոտքերը՝ անմեղութեամբ ծածկընում էին, և կիզիչ տաքութիւնը իրեն համար վարդի ճամբայ մըն էր»: Սոյն երկրէն ճամբորդ մը, վերջերս կը պատմէ թէ երկու Հնդիկներ կրակի դատաստանին ենթարկընուեցան: արոնցմէ մին առանց վնասուելու հրաշէկ երկաթէ գունտ մը բռնեց, իսկ միւսը, ձեռքը եռացող խղի մէջ խոթելով սոսկալի կերպով այրեցաւ: սա՛ ալ ըսենք թէ վերջինին ամբաստանիչը պրահման մըն էր:

ԺԴ. Դարուն սկիզբները Քօթօն եպիսկոպ

պոսը, Տանրմարքայի Սիւննով Բ.ը եւ երկ-
րին բնակիչները քրիստոնէութեան դարձը-
նելու համար, ամբողջ ձեռքն ու բազուկը
հրաշեկ երկաթէ ձեռնոցի մը մէջ անցուց ու
սարտափած ժողովականներու բազմութեան
մէջէն անցնելով գնաց ձեռնոցը իշխանին
ոտքերուն տակ դրաւ: Ձեռքին վրայ պզտիկ
այրուցք մը իսկ չէր կազմուած:

Ամերիկայի մէջ իսկ ամբաստանեալ մը իր
անմեղութիւնը ապացուցանելու համար մար-
մինին ո եւ է մասին վրայ կրակին անազ-
դեցիկ ըլլալը կը ցուցնէր: Այս տեսակ դա-
տաստաններուն նշանաւոր շրջանը միջին
դարու մէջ կատարուած է: Փորձի արարո-
ղութիւնը բոլորովին կրօնական կը համար-
ուէր: Ամբաստանեալը փորձին կատարուելէն
երեք օր առաջ եկեղեցի կը տարուէր եւ
հոն կը մնար մինչեւ որոշեալ ժամանակը
ձեռքերը պատատուած ու կնքուած, որպէս
զի չկարենայ ո եւ է կերպով պատրաստու-
թիւն մը տեսնալ: Փորձի օրը, եկեղեցա-
կան հանդիսաւոր արարողութենէ մը ետքը
Կաթոլիկոսը կը բազմի աթոռին վրայ շր-
ջապատուած իր կղերականներէն: Մէջտեղը
կար կրակարան մը որու մէջ հրաշեկ դար
ձած էր երկաթէ թաթպան մը: Կրակն ու
թաթպանը յատուկ օրհնութիւն մը գտած
էին: Ամբաստանեալը, որ առաջուց խոստո-
վանած էր, ծնրադիր կը ներկայանար աջ
ձեռքն ու բազուկը մերկ, հրաշեկ թաթպանը
ձեռքը կ'անցնէր եւ երեք անգամ կրակա-
րանին շուրջը դառնալէ ետքը կ'երթար
դայն կը դնէր Կաթոլիկոսին ոտքերուն առ-
ջեւ աթոռի մը վրայ. աթոռին յարդը իս-
կոյն կը բռնկէր կրակին ազդեցութեան տակ:
Անմիջապէս կրօնականները կը պատատեն
նորէն ձեռքերը եւ նորէն դրոշմով կը կրն-
քեն: Երեք օր այսպէս կապած մնալէն ետ-
քը, հանդիսաւոր կերպով բացումը կը կա-
տարուէր: Եթէ, ամբաստանեալը անմեղ էր
իրեն վերագրուած յանցանքէն, ձեռքը ա-
նարատ կը մնար. եթէ յանցաւոր էր՝ ձեռ-
քը այրած կ'ըլլար: Կրնաք հասկնալ թէ այդ
վեց օրուան միջոցին կրօնականները ուզած
մարդերուն ձեռքերը անկիզբի վիճակի
մէջ կը դնէին: Մինչդեռ դատապարտել
ուզածնին ալ կ'արգիլէին որ օգնութիւն մը
գտնէ:

Մարդուս մարմինին չայրօհիլը 1677ին է

որ սկսաւ իբր գիտական խնդիր մը նկատ-
ուիլ: Այդ ատենները անգլիացի մը, Ռի-
չարտսըն անկիզբիութեան փորձեր կ'ընէր,
որով հետաքրքրուեցաւ գիտական Ագատե-
միոյ անդամներէն Տօտար:

Անգլիացին բոլորիկ ոտքով հրաշեկ ածու-
նելու վրայ կը քալէր: Ծծումբը կը հալե-
ցնէր ու բռնկցնելով ափին մէջ կը դնէր:
Լեզուին վրայ կրակներ չկը դնէր ու պզտիկ
միսի կտոր մը կ'եփէր, երբ օգնականն ալ
վիքոցով մը կրակը կը հրահրէր: Հրաշեկ եր-
կաթի քանակ մը ձեռքերու մէջ կը բռնէր,
լեզուին կը քսէր, անոաներով կը խած-
նէր, եւլն: Նոյն իսկ հալած մետաղներ կը
կլլէր: Բոլոր այս փորձերուն մէջ դէմքը ան
սարսուռ հանդարտութիւն մը ունէր, և ոչ
մէկ ջիղը չէր երերար իբր ցաւի նշան:

Տօտար ակադեմիականը, ասոր իբր պատ-
ճառ կը նկատէր մորթին թանձրանալով
անզգայ վիճակ մը ունենալը, ինչպէս որ
դիւղացիի մը կոչկոռտած ձեռքը շատ քիչ
զգայնոտ է, կաղդատմամբ բարձր դատու
պատկանող աիկնով մը ձեռքին:

Յաջորդ թիւով պիտի ուսումնասիրենք
այս հարցին բուն իսկ պատճառը:

ՋԱՐԷՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՓՈՒՐԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Շաբ. 9րդ քիւէն)

ԳԼՈՒԽ Զ.

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԸ ԿԱՄ ՀՐԷԱՆԵՐԸ

Հիմ Աւանդութիւններ. Քաղաքային ու
Կրօնային Օրենսդրութիւն. — Հրէաներն ի-
րենց ցեղին գլուխը կը դնէին Աբրահամը,
անոր որդին Իսահակը և Յակոբը՝ Իսրայելի
տառներկու ցեղերուն հայրը: Ամէնուն ծա-
նօթ են Յովսէփին սրտառուչ պատմութիւնը,
Եգիպտոսի մէջ Հրէից գերութիւնը, ինչ-
պէս Մովսէս զանոնք վերադարձուց անպ-

պատը և այն օրէնքները որոցմով զանոնք կապեց միակ Աստուծոյ մը վարդապետութեան կամ դաւանութեան: Հրէայք ուրիշ ազգերու պէս այլ եւ այլ դասերու բաժնուած չէին: Ամենքն ալ քաղաքացիի՝ իրաւունք ունեցան առաջի Աստուծոյ և միանգամայն հանդէպ Բաղդին. որովհետեւ ամէն շարաթական տարիի մէջ, այսինքն ամէն եօթը տարիէ վերջ, և ամէն յօբէլեանի՝ որ իւրաքանչիւր 49րդ տարի վերջ կը նորոգուէր, գերիները կ'ազատագրուէին, պարտքերը կը ջնջուէին և ձեռքէ հանուած սեփականութիւնները նորէն իրենց առաջին բուն տէրերուն կը վերադարձուէին: Հրէից ազգապետները ժողովուրդէն կ'ելլէին, եւ եթէ իրենց կրօնականները Ղեւտական ցեղէն կ'առնուէին, կրօնական յաջորդութիւնը անոնց ո'չ հարստութիւն, ոչ ալ զօրութիւն կուտար: Ամէն ինչ որ հին աշխարհքը կը նուաստացնէր, Մովսիսական օրէնքը կը բարձրացնէր զայն. թէեւ աղքատին համար անկողմնակալ չէր, բայց օտարականը իբրեւ թշնամի չէր նկատէր. կը համարէր գերին իբրեւ մարդ, կը թողուր կնոջ որ ընտանիքին պետին քով նստի միեւնոյն յարգանքներով չըջապատուած: Տասնաբանեային մէջ՝ որ աստուածային ու մարդկային բոլոր բարոյականը տասը յօդուածներու բաժնած էր, կը կարդանք: — « Ինձմէ Յաւիտենականէն զատ ուրիշ Աստուած պիտի չունենաւ. ես եմ որ քեզ եղիպտոսէն, գերութեան տունէն հանեցի. — Դուն չի պիտի շինես երբէք Երկինքն Եղողին պատկերը, երկրին վրայ կամ ջուրերուն մէջ: — Պատուէ հայրդ ու մայրդ, որպէս զի շատ ապրիս: — Դուն երբէք չպիտի ընես գողութիւն: — Դուն չպիտի ընես սուս վիսյութիւն դրացիիդ դէմ: — Դուն երբէք չպիտի աչք տնկես ոչ անոր տունին, ոչ անոր ծառային, ոչ անոր վերաբերած ո' եւ է բանի մը: »

Օրէնքին մէջ կը կարդանք սա գեղեցիկ ու սրտաշարժ պատուիրանները. « Դուք երբէք չարիք չպիտի ընէք բազմութեան հաճոյանալու համար. դուք չարիքին դէմ բուրիք պիտի ընէք ու պիտի սիրէք ձեր դժբաքին՝ ինչպէս որ ինքզինքնիդ կը սիրէք: Այլին ու որքը պաշտպանելը ձերին պարտքն

է: Ոտքի ելէք անոնց առջեւ որոնք ձերմակ մաղերով են: Երբ կը քաղէք ձեր հունձքերը, ետեւնիդ ինկած հասկերը պէտք չէ որ ժողվէք, ոչ ալ որթատունկին վրայ մոռցուած հասկերը հաւաքէք, որովհետեւ անոնք աղքատին ու օտարականին բաժինն են: Դուք պիտի աշխատիք վեց օր, եօթերորդ օրը պիտի ըլլայ հանգստեան օր, որպէս զի ձեր սպասուհոյն զաւակը եւ օտարականը, ձեր եղն ու էջը հանգչին: »

Պաղեսիմի գրաւումը. — Դասաւորներ, Թագաւորներ. — Ձէ թէ Մովսէսն էր, այլ Յեսուն որ անցաւ Յորդանանէն և բաժնեց Քանանու երկիրը Իսրայելի տասներկու ցեղերուն միջեւ: Անորմէ յետոյ՝ Երապեցիք կառավարուեցան իւրաքանչիւր ցեղի հիմնրով (ձերերով): Յետոյ Դասաւորներով որոնք քաջ մարդեր էին ու ազատագրեցին Իսրայէլը օտար տիրապետութենէն, 1097ին ուղեցին Թագաւոր մը. Սամուէլ Մեծ-Բահանան ընտրեց Սաուլը՝ ուժով ու կտրիճ մարդ, զայն օծեց թափելով սուրբ իւղն անոր գլխուն վրայ: Սաուլը արդարացուց առաջին անգամ այս ընտրութիւնը իր չափաւորութեամբն ու իր յաղթութիւններով. սակայն թողուց իր չարքաշ ու պարզակենցաղ վարքը ու թօթուեց մեծ քահանայապետին լուծը: Աս ալ հրէայ հովիւ մը, Դաւիթը օծեց, որ եղաւ Թագաւոր երբ Սաուլը ինկաւ, 1058ին, պատերազմի մը մէջ: Սիօնի (Երուսաղէմ) առումը և իր Թագաւորութեան սահմանները դէպի հիւսիս՝ մինչեւ Եփրատ, դէպի հարաւ մինչեւ Կարմիր ծով տարածելը կը ցցնեն յաղթական իշխանը: Ծէսին համար, հանրային վարչութեան ու բանակին համար իր կանոնադրութիւնները, Տիւրոսի հետ կնքած դաշինքները, վերջապէս տաճարին շինութեան համար ժողոված ասաղձներն ու նիւթեղէնները կ'ապացուցանեն անոր աշխարհաչէն ոգին: Եկեղեցին կ'երգէ տակաւին վսեմ սաղմոսներ որոնք անոր սեփականուած են:

Իր որդին Սողոմոն շինեց հոյակապ կերպով Երուսաղէմի Տաճարը, հիմնեց Բալմիրը անապատին մէջտեղ, ստեղծեց նաւատորմիդ մը Կարմիր ծովուն վրայ և դաշնադրութիւններ հաստատեց Տիւրոսի ու Եփրատի հետ: Բայց իր մեծագործ շինու-

թիւներն ու իր ճոխապանծ ու շուայլ կեանքը սպառեցին դանձր :

Բաժանումը (978) եւ Գերեմիաթիւնը (599) . — Ռորովամ, իր սրգին, տուրքերը թեթեւեղութեամբ խնդրեց մերժելով, առաջ ցեղերը բաժնուեցան իրարմէ. Բենիամին եւ Յուդայ մնացին լոկ Դաւիթի տան հաւատարիմ: Այն ատենէն ի վեր՝ հրէական իշխանութիւնը երկուքի բաժնուեցաւ, Իսրայէլ եւ Յուդայ: Իսրայէլն աւելի բազմաբնակիչ եւ աւելի ընդարձակ էր: Յուդա՝ աւելի հարուստ, աւելի յարգուած, որովհետեւ Տապանակ Ուխտին ինք կը ժառանգէր:

Երբայական ժողովուրդին այս բաժանումը կործանեց անոր ոյժը, Բաբելոնացիներուն հարուածներուն տակ ընկճուեցաւ, ողբալի անիշխանութենէ մը վերջ, Իսրայէլի թագաւորութիւնը՝ 721ին, Յուդայինը՝ 588ին երբ Սեղեկիա գերի քշուեցաւ Բաբելոն:

Այս գերութիւն տևեց 70 տարի, մինչեւ Կիւրոս՝ որ 529ին, ներեց Երբայեցիներուն իրենց տաճարը վերաշինելու համար, 42,000 Հրէաներ, Զօրաբարելի առաջնորդութեամբ վերստին տեսան Սուրբ Քաղաքին աւերակները:

Երբայեցիք հանդարտ կեցան Պարսից, Աղէքսանդրի եւ Պաղքեանց տակ, այս վերջիններէն երկրորդը, այսինքն Պաղքեանց Եղբայրասէր, թարգմանել տուաւ անոնց Սուրբ Գիրքը (Թարգմանութիւն Եօթանասնից): Սուրբ թագաւորութեան կըցողելով վերստին նարէն հալածուեցան: Սակեկոս Դ. կողոպտեց անոնց տաճարին բոլոր ճոխութիւնները, եւ Անտիոքոս Դ. դրաւ Եհովաի խորանին վրայ մինչեւ իսկ Ողիմպեան Արամազդին արձանը: Յունական բազմաստուածութիւնը միակ Աստուծոյն սրբափայրին մէջ տեղաւորելու այս փորձը դժգոհութիւն մը առաջ բերաւ, առաջնորդութեամբ: Մակաբէներու նշանաւոր ընտանիքին: Հրէական պետութիւն մը վերստին կազմուեցաւ, որուն կարճատեւ գոյութիւնը Հերովդէսի օրով քիչ մը փայլեցաւ: Յիսուս ծնաւ այս իշխանին ատեն, եւ Տիբեր կայսեր մահէն 4 տարի առաջ քարոզեց իր վարդապետութիւնները: Հրէաները Հռոմայեցիներուն հպատակ դառնալով երուսաղէմի Տաճարը կործանեցաւ, իրենք ալ ցրուեցան գացին:

Հրէաները իրան մը չըրին արուեստի, գիտութեան եւ ճարտարագործութեան համար: Բայց անագորչն տառապանքներ քաշելով՝ փրկիցին աստուածային միութեան թանկագին վարդապետութիւնը, եւ հին օրէնքը, որ Յիսուսի ձեռքով կերպարանափոխուելով, եղաւ գթութեան ու եղբայրական սիրոյ օրէնքը:

(Շարունակելի)



Դ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Լ Վ Է Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 12րդ քիւէն)

Ինչպէս կը տեսնէք, այս երեւոյթները որքեք իրարու յաջորդելով կղզին ձեւացուցած են, բոլորն ալ ներքին կրակի մը ազդեցութեան տակ կատարուած են. ուրեմն յիմարութիւն էր պնդելը թէ մշտնջենաբար հրաշէկ վիճակի մէջ չէ երկրիս կեդրոնը, եւ ամենամեծ յիմարութիւնն էր՝ հոն երթալու համար ճամբայ ելլելը:

Ճամբան երթալով կը դժուարանար, ժայռի կտորներ ալ ու ձախ կը ցցուէին. ամէնէն մեծ վախս վար գլորիլն էր:

Երեք երկար ժամեր տաժանագին քալուածքէ մը յետոյ, լերան ստորոտը հասանք: Հանս դադարի նշանը տուաւ, պղծտիկ նախաճաշ մը ընելու համար: Հօրեղբայրս շուտ լմնալու համար երկու պատուր մէկ կ'ընէր:

Ժամ մը հանգիստէ ետքը ճամբայ ելանք: Հիմա սկսեց ինք բուն լեռան կողին վրայ մագլցիլ: Տեսողական պատրանքով մը Սնէֆէլսի դազաթը շատ մօտիկ կ'երեւար ինձի. քայց քանի՜ քանի ժամերէ ու ինչ յոգնութիւններէ ետքն է որ հոն հասանք: Ճամբուն վրայի քարերը գնդակներու պէս կը գլորէին ոտքերնուս տակ եւ կ'երթային մինչեւ վարի դաշտին մէջ կիյնային:

Հոս պարտաւոր եմ ըսելու թէ մինչեւ վերջը հօրեղբայրս քովէս չհեռացաւ, պէտք

եղած՝ ժամանակ օգնութեան հասնելու համար: յիշաւի ալ, մէկէ աւելի անգամներ իր բազուկը ապահով յենակէտ մը կ'ըլլար ինծի:

Ժամ մը մագլցելէ ետքը, լեռան ձիւնապատ հողին վրայ տեսակ մը սանդուղի առջեւ հասանք, որ կազմուած էր հրաբուխէն դուրս նետուած քարի հեղեղներէ: Եթէ այս հեղեղներուն անկումը՝ լեռան կողերուն դիրքին բերմամբ տարբեր ուղղութիւն մը առած չըլլար, շիտակ պիտի երթային ծովին մէջ նոր կղզիներ ձեւացնել:

Իրիկուան ժամը մէկին, սանդուղին երկու հազար աստիճաններէն անցանք և հասանք սարահարթի մը մէջ, որու վրայ կը յենուր բուն իսկ խառնարանը:

Ծովը կը տարածուէր մենէ երեք հազար երկու հարիւր ոտք վար: մշտնջենական ձիւնի սահմանէն անցած էինք: Տաժանելի ցուրտ մը կ'ընէր և հովը կը փչէր՝ սոսկալի կերպով: Բոլորովին պարտասած էի. հորեղբայրս տեսաւ վիճակս և հակառակ իր անհամբեր բնավորութեանը նշան ըրաւ առաջնորդին որ կանգ առնէ:

— Օֆովանֆէօր, պատասխանեց վերջինը գլուխը օրօրելով:

— Կարծեմ քիչ մը աւելի վեր ելլելու է, ըսաւ հորեղբայրս:

Յետոյ Հանսի հարցուց պատճառը:

— Միսթուր, ըսաւ առաջնորդը:

— Ես, Միսթուր, կրկնեց Իսլանտացիներէն մին ահաբեկ երեւոյթով մը:

— Ի՞նչ կը նշանակէ այս բա՛ւր, հարցուցի մոտատանջ:

— Տէ՛ս, ըսաւ հորեղբայրս:

Իէպի դաշտը նայեցայ, չեչաքարի, աւազի և փոշիի ահագին սիւն մը կ'ոլորտըկէր թաթառի մը պէս: Հովը զայն կը բերէր Սնէֆէլսի կղզին վրայ ուր մենք կառնած էինք: Եթէ մեր վրայ հասնէր, իր գալարներուն մէջ պիտի յափշտակէր մեզի:

— Հասթիկ, հասթիկ, դոչեց առաջնորդը:

Առանց դանիերէն գիտնալու, հասկցայ որ իրեն հետեւելու կոչ մըն էր ասիկա: Շուտ ընդ վոյթ խառնարանին խարիսխին միւս կողմը անցանք: Թաթառը լեռան վերայ ինկաւ. քարերը ու ժայռի կտորները հովի ոլորքներուն մէջ բարձրացան և հրաբուխէ ինկածի նման անձրեւի պէս թափե-

ցան: Այս երեւոյթը, որու տեղացիները միսթուր կ'ըսեն, շատ յաճախադէպ է, երբ հովը սառնարաններուն վրայէն փչէ: Բարեբաղդաբար մենք հակառակ դառնութիւն վրայ, ապահով տեղ մըն էինք: Առանց մեր առաջնորդին արթնամտութեան, մարմիննիս կտոր կտոր եղած՝ անծանօթ օդերեւոյթի մը պէս հեռուները պիտի իյնար:

Առաջնորդը՝ անխոհեմութիւն սեպեց գիշերը լեռան կողին վրայ անցնելը, ուստի ելքերնիս շարունակեցինք: Դեռ հազար հինգ հարիւր ոտք տեղ քալեցինք՝ հինգ ժամուան մէջ: Ա՛լ վրաս կարողութիւն չէր մնացեր. ցուրտէն սարսուռն, անօթի, թոքերս իսկ չէին կրնար բաւական օդ գտնել այդ քիչ մը անօսը մթնոլորտին մէջ:

Վերջապէս կէս գիշերին Սնէֆէլսի գագաթը հասանք: Խառնարանին մէջը ապաստան մը գտնելէ առաջ ակնարկ մը նետեցի՝ « կէս գիշերուան արեգակին » վրայ, որ՝ իր ընթացքին էն վարի կէտը հասած, տարտամ լոյսով մը կը պլպլացնէր ոտքերուս տակ քնացող կղզին:

ԺԶ.

Ճաշը չուտով մը լմնցուցինք և կրցանուս չափ կծկտեցանք մէյմէկ անկիւն: Երբ առտուն արթնցայ, կէս մը սառած էի: Դուրս ելայ և գացի դիտել սքանչելի տեսարանը որ կը պարզուէր աչքիս առջեւ: Այս անսովոր դաշտանկարին երեւոյթը տեսակ մը երագի մէջ յափշտակեց ինծի: Բիչատենէն հորեղբայրս ու Հանս եկան միացան ինծի:

Հորեղբայրս դէպի արեւմուտք դառնալով թեթեւ մշուշ մը, ցամաքի երեւոյթ ունեցող բան մը, ալիքներուն վրայ մութ գիծ մը ցուցուց:

— Կրօէնլանտան է, ըսաւ:

— Ի՞նչ, Կրօէնլանտա՛, գոչեցի:

— Այո՛, հազիւ թէ 35 փարսախ հեռու ենք անկէ: Կը պատահի որ, սառերը հալած ժամանակը, ձերմակ արջեր սառնակոյտներու վրայ մնալով մինչեւ հոս կը քլուին: Ի՞նչ եւ իցէ, Հիմա Սնէֆէլսի վրայ կը գտնուինք, ահա երկու գագաթները, մին հիւսիս, միւսը դէպի հարաւ: Հանս պիտի ըսէ հիմա թէ՛ մեզի կրող գագաթին անունը:

խնչ է: Եւ որոտրդին դառնալով դանիերէն հարցում մը ուղղեց:

— Սքարթարիս, պատասխանեց:

Հօրեղբայրս յաղթական ակնարկ մը նետեց վրաս:

— Խառնարանին մէջը՝, ըսաւ,

Սնէֆէլսի խառնարանը գլուխը վար դարձած կոն մը կը ներկայացնէր, որու բերնին տրամագիծը կէս փարսախի չափ կար: Խորութիւնը երկու հազար ոտք հողուեցի: Սակայն ձագարին յատակը առ առաւելն 500 ոտք շրջապատ ունէր, անանկ որ իր կողերը շատ ցից չէին:

Հանս, անտարբեր, խումբին գլուխը անցաւ Աւելլի դիւրաւ իջնելու համար, որտորդը կրցածին շափ երկար պոռոյտներ կ'ընէր: Ճամբան լեցուած էր հրային ժայռի կտորներով, որոնցմէ մէկ քանին անդերնուն խախտելով՝ ահագնադղորդ մինչեւ անդունդին խորը կը գահավիժէին:

Խառնարանին մէկ քանի մասերուն մէջ մէյմէկ պղտիկ սառնարաններ կազմուած էին: Երբ ասոնցմէ մէկուն վրայ կը հասնէինք, Հանս ուշադրութիւնը կը կրկնապակեր, երկաթապատ գաւազանովը միշտ գետինը զննելով: Տեղ տեղ ալ չուանով իրար կը կապուէինք, որպէս զի եթէ մէկերն իսկ ինարս միւսները կարենան զայն դիւրաւ ազատել:

Հակառակ ճամբուն դժուարութեան, առանց պատահարի խառնարանին յատակը հասանք: Կէսօրի մօտ էր: Հոս կը բացուէին երեք հրաբուխի հնոցի բերաններ, որոնցմէ լավաններն ու շոգիները դուրս կը նետուէին Սնէֆէլսի բորբոքած ժամանակները, Իւրաքանչիւրը հարիւր ոտք տրամագիծ ունէր: Սիրտ չըրի ասոնց մէջը նայելու: Հօրեղբայրս սկսաւ խենդի պէս մէկէն միւսը վազվզել, նայելով, զննելով, անհասկնալի խօսքեր կ'մկմարէր: Հանս ու բեռնակիրները ժայռի մը վրայ նստած՝ զարմացած անոր կը նայէին:

Յանկարծ Հօրեղբայրս աղաղակ մը արձակեց. կարծեցի թէ անդունդներէն մէկուն մէջը կը գլորի կոր, բայց ո՛չ: Թեւերը բացած, ոտքերը տնկած, կրանիթէ ժայռի մը առջեւ ապշած կը նայէր:

— Աքսէլ, Աքսէլ, պոռաց, եկուր:

Քովը վազեցի:

— Նայէ՛, ըսաւ դասախօսը:

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)



ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Երիզա, Պ. Էֆ. Ա. — Ձեր յանձնարարութիւնը ամբողջովին կատարուեցան եւ թղթատարով ղրկուեցաւ:

Ա.Ֆ. Գարահիսար, Ա. Էֆ. Պ. — Ձեր յանձնարարած նոր բաժանորդին 10 քրթիւէն սկսեալ ղրկուեցաւ: Ջատ նամակ գրուած է ձեզ:

Ատանա, Մ. Էֆ. Պ. — Հանդէսիս ուղղութեան յարմար ձեր ըսած գրութիւնները սիրով կը հրատարակուին: Կը խորհնր որ հանելուկներու լուծումը առաջարկութեամբ հետ միասին ղրկէք: Եթէ կ'ուզէք ըսած օրացոյցնիդ ղրկեցէք:

Պալակէսի, Պ. Էֆ. Ն. Տ. — Նախորդ գրութիւննիդ անցած ենք: պիտի հրատարակենք իր կարգին: Նոր բաժանորդներուն ղրկուեցաւ 1-13: Այլ ձեզ պիտի պատասխանէ:

Հիւսէյնիկ, Կ. Մ. Տ. Էֆ. — Խորին շնորհակալութիւն ձեր ողնիւ համակրանաց: Ռ. Էֆ. Տ. Ս. ի 12րդ թիւէն սկսեալ ղրկեցինք, ինչպէս նաեւ 1-13 ձեր հասցնին: Ենդրածնիդ կը կատարուի:

Մարաշ, Արթ. Ն. Բ. Շ. — Նոր բաժանորդին 1-13 թիւէն ղրկուեցաւ ձեր հասցէին: Ձեր խնդրած գիրքը ստանալու համար միւրեւ ժամանակ սպասել հարկ է:

Հալէպ, Ս. Էֆ. Ա. — Ս. Էֆ. Դ. կ'ըսէ. Թէ նամակ չէ առած որ վճարէ:

ՀՈՒՑՈՒՄԸ ԹԻՒ 19 ՀԱՆԵՆԴՈՒԹՅՈՒՆ

Ն աւակալ
ճ Ո ճ ա ն ա կ
հ ո թ ի զ ո ն
ժ ա ն Տ ա խ տ
ս է ր վ է ր ա
ե լ ա կ ե Ն ի
կ ա յ ծ ո Ա տ
զ ր չ ա Բ ա ր
մ ա ն Ի շ ա կ
ո ր Ա տ ու մ
ե լ ն ա ր ա ն
Տ պ ա զ ր ի չ

ՆՈՐՏԵՆՍԳԻՄՏ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին					
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ		ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »	Կ. ՊՈԼԻՍ		Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ		ԹԻԼ 61		ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 ըուպի			Տարեկանը	10 ձրանք

Ձեռնէ կը ծախուի հաւար 40 փարայ

ՊԱՏԱՍԻԱՆ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒ


ԼՈՒԾՈՒՄ 24 ՆԿԱՐՀԱՆԵԼՈՒԿԻ

21. — Անհաւատար երկարութեամբ երկու ճօճանակներ մի եւ նոյն ժամանակին մէջ մի եւ նոյն ճօճումները չեն կատարեր. երկայնները աւելի դանդաղ կը շարժին քան կարճերը. Արդ տաք օդերուն՝ ճօճանակները կախող մետաղէ թելերը երկնալով՝ ճօճումներն ալ կը քիչնան ու կը կամացնան որով ժամացոյցն ալ աւելի դանդաղ քալելով ետ կը մնայ, իսկ ցուրտ օրերուն ճօճանակը կարճնալով ճօճումները կ'արագանան ու կը շատնան, ժամացոյցը աւելի շուտ կը բանի ու առաջ կ'երթայ:

Լուծեց՝ Մ. Գալէնտէր.

22. — Որ եւ իցէ հեղուկի կամ կազի մէջ ընկզմած մարմինն իր ծանրութենէն մաս մը կորսնցնէ՝ հաւասար իր ծաւալը բռնող այդ հեղուկին կամ կազին ծանրութեան: Եթէ երկաթի կտոր մը ջուրի կամ թթուածին կազի մէջ կշռենք՝ իր ծանրութենէն կը կորսնցնէ մաս մը որ հաւասար է երկաթին ծաւալը բռնող ջուրի կամ թթուածինի ծանրութեան: Ըսել է թէ օդին մէջ կշռած մարմիններուն ծանրութիւնը ճիշդ իրենց ծանրութիւնը չէ, քանի որ անոնք իրենց ծաւալին չափ բռնող օդին ունենալիք կշռութիւն չափ ծանրութիւն կորսնցուցած են:

23. — Յուրտ օրերուն ջուրը կը սառի և սառի ջուրը՝ իր հեղուկ վիճակին մէջ բռնած տեղէն շատ աւելի ծաւալ կ'ուզէ. ամենէն առաջ ջուրին երեսը կը սառի, որով տակը մնացած ջուրը՝ վեր չկրնար բարձրանալ քանի ծաւալը մեծնայ, ուստի բնականաբար պիտի ճնշէ կողերուն վրայ եւ պայթեցնէ ամանը: Մինակ պզտիկ կաղամախները չեն որ կը պայթին, հապա երկաթէ ու քարէ շինուած ամենամեծ ջուրի ընդունարաններ, երբ սառին՝ կը ճաթափին:



Սոյն քննարկական հարցումներուն պատասխանած եւ 24րդ հանելուկը լուծած են. — Մ. Գալէնտէր. — Աշոտ Պազպազեան. — Ա. Պօզաճեան. — Կարապետ Էսմէրեան, (Աշ. Կեղը. վարժ): — Յարութիւն Ն. Նիկողոսեան եւ Գ. Գալուստեան (Աշ. Իբր. վարժ. Ամասիա): — Մ. Յ. Պետրոսեան Ատանա: — Գէորգ Աղլամիշեան, Յ. Կ. Ե. Քիպարեան, Գրիգոր Սիմիթեան (Աշկրտք. Անաթոլի Գօլէճի, Մարգուան):

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻՐ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր Ասանա, Յակոբ էֆ. Պօղոսեան Ասափազար, Ստեփան էֆ. Սափրիշեան Աֆիոն Դարահիսար, Աշոտ էֆ. Պազպազեան Լեթկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման Չմիռնիա Կարապետ էֆ. Մալէճանեան Էրզրում, Տիգրան էֆ. Բուտեան Խալքեդ, Ռուբէն էֆ. Զարդարեան Հալեպ, Ս. էֆ. Ամատեան Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան Մարգուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան Սիմ հաճի Բեօյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Վեզիր Բեօբիւ » » » Տիարպէֆիւ, Լեռն էֆ. Սրապեան

ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԽՄԱԳՐԱԳԵՏ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1933

1933

1933

1933


1933



Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ և թէ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի ածանուծեամբ գոհացում տալ նոյն իսկ էն խոտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի դաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի չոխ մթերք մը:

Ա Ժ Ա Ն

Ա Ժ Ա Ն

Ա Ժ Ա Ն

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՑԱԲԱՐԴԵՐՈՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐԸ

Մէկ լեզուէ միջակ թուղթ 100 հատը	7 ղ.
Երկու » » » » »	9 »
Երեք » » » » »	11 »
Մէկ » ընտիր » » » »	8 »
Երկու » » » » »	10 »
Երեք » » » » »	12 »
Ոսկեզօծ եզերքներով ընտիր թուղթ	16 »
» » գունաւոր » » »	17 »
» թրթրլէզերք. ձերմակ » » »	17 »
» » » գունաւոր » » »	18 »

Թուրքերէն Սիւլիս, Թաալիւք եւ Բըզդա գրով փորագրեալ այցաքարդերուն համար՝ 12 ղը. աւելի ծախք մը վճարել պէտք է: Լուսանկարով միասին տպագրեալ այցաքարդերուն 100 հատը 60 ղը:

Գաւառներէ եղած յանձնարարութեանց համար թղթատարի ծախք չի պահանջուիր: Վճարմունք կանխիկ են:

ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ութերորդ պրակը լոյս տեսաւ և այս շաբթու պիտի շրկուի բաժանորդներուն:

Այս Ը. պրակին մէջ դրուած է նաեւ նիւթերու բաժանումն ու ժամանակացոյցը: Բաժանորդագիրն է 25 դահեկան: Դիմել ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՕՐԱՍԱՆՏԵԱՆ ԽԱՆ, Սիւրբեհի, Կ. Պոլիս

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ ՀԵՂԻՆԱԿ ՍԻՄՕՆ ՉԷՕՄԼԷՔՃԵԱՆ (ԺԻՐԱՅՐ ԾԻՐԱԿԱՅԻ)

Գին Բ. Հատորի 12 ղը. — Կանխիկ վճարողներու համար զեղչ 15%: Դիմել ԹԵՐԹԻՍ հասցէին Հրատարակուեցաւ Բ. Հատորի չորրորդ տետրակը:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հատու 40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ:

Տպագրիչ եւ Փորագրիչ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

և. ՊՈԼԻՍ, ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 61.